

ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

**ՍԱՔՈՒՐ ՊՂՆՁԱՓՈՇՈՒ ՍՏԱՑՈՒՄԸ ԿՈՆՎԵՐՏԵՐԱՅԻՆ
ՊՂՆՁԻ ՈՒՂԱԿԻ ԷԼԵԿՏՐՈՎԱՖԻՆԱՑՄԱՍԲ**

L. Սարգսյան, Ս. Իսրայելյան

Կոնվերտերային (կիսամաքուր) պղնձի ուղղակի էլեկտրառաֆինացմանը նվիրված սակավաթիվ աշխատանքներում [1-4], չնայած չի բացառվում միափուլանի գտումով (առանց նախնական հրային ռաֆինացման) մաքուր կաթոդային մետաղի ստացման հնարավորությունը, սակայն պրոցեսի գործնական կիրառության սահմանափակվածությունը հեղինակների կողմից հիմնականում կապվում է համեմատաբար ցածր տեխնիկա-տնտեսական ցուցանիշների հետ:

Նշված խնդիրները, այնուամենայնիվ, կարող են լուծում ստանալ, եթե խիտ կաթոդների փոխարեն էլեկտրոլիզի արգասիքը ձևավորվի փխրուն կաթոդային մատվածքի տեսքով, որը ծառայում է որպես էլանյութ լայն պահանջարկ վայելող պղնձափոշու ստացման համար:

Այս նպատակով, հետազոտվել է «Էյ-Սի-Փի» ընկերության Ալավերդու պղնձածուլական գործարանի կողմից բողարկվող կոնվերտերային պղնձի էլեկտրոլիտիկ ռաֆինացման գործընթացը, հոսանքի բարձր խտության պայմաններում:

Ռաֆինացվող անոդները 80×45×8 մմ չափերով պատրաստվել են առաքման ենթակա արտադրանքին համապատասխանող բաղադրության կիսամաքուր պղնձից (աղյուսակ): Չուլված նախապատրաստվածքներում առկա զազային խռոչների փակման համար անողային սալերը ենթարկվել են հարթ մամլման՝ հիդրալիկ մամլիչի օգնությամբ: Բոլոր փորձերում որպես կաթոդային հիմք է ծառայել չժանգոտվող պողպատյա թերթը, նույն չափերով, ինչ անոդը:

Աղյուսակ

Կոնվերտերային պղնձում խառնուրդների պարունակությունը, * % (ոչ ավել)

Si	Al	Mg	Fe	Ni	Pb	O ₂
0,0075	0,0032	0,0075	0,0075	0,01	0,024	0,6
Ca	Ti	Sn	Ag	Mo	Cr	S
0,01	0,0013	-	0,1	0,003	0,001	0,27

*Էմիսիոն-սպեկտրիալ վերլուծությունը կատարվել է ԳԳ ԳԱԱ ԵԳԻ լաբորատորիայում: Թթվածնի պարունակությունը որոշվել է մետաղազրաֆիկ եղանակով:

Էլեկտրոլիզի փորձերն իրականացվել են հարթ-գուգահեռ էլեկտրոդներով, 10-35 մմ միջէլեկտրոդային հեռավորություններով: Որպես էլեկտրոլիտ օգտագործվել են պղնձի սուլֆատի թթվային լուծույթներ՝ 40 գ/լ Cu և 120-180 գ/լ H₂SO₄ բաղադրությամբ:


Պրոցեսի հիմնական պարամետրը՝ պղնձի ելքը ըստ հոսանքի ուսումնասիրվել է էլեկտրոլիտի 30-60 °C ջերմաստիճանային տիրույթում, 1500-3000 Ա/մ² հոսանքի խտության պայմաններում:

Նկ. 1-ում բերված գրաֆիկից երևում է, որ 30 °C-ում պղնձի ելքը ըստ հոսանքի ամենացածրն է՝ 78 %: Ջերմաստիճանի բարձրացումը բերում է ըստ հոսանքի ելքի մեծացման, այն հասցնելով մինչև 94 %՝ 60 °C-ի դեպքում: Դա բացատրվում է նրանով, որ ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց Cu²⁺ իոնների շարժունակության մեծացման հետ մեկտեղ, ավելանում է մաև կաթոդի վրա նրանց վերականգնման արագությունը: Դրա հետևանքով մերձկաթոդային տարածությունը աղքատանում է պղնձի կատիոններով, իսկ, այնուհետև, դրանց կոնցենտրացիան արագորեն վերականգնվում է ինտենսիվ խառնման շնորհիվ:


Նկ. 2-ից երևում է, որ հոսանքի խտության բարձրացմանը զուգընթաց, ըստ հոսանքի, պղնձի ելքը աճում է գծային օրենքով:

Միջլեկտրոդային հեռավորությունից կախված, ըստ հոսանքի, մետաղի ելքը փոքրանում է (Նկ. 3):


Ծծմբական թթվի կոնցենտրացիան բավականին լայն տիրույթում ազդեցություն չունի ըստ հոսանքի մետաղի ելքի վրա (Նկ. 4):




Նկ. 1. Ելքի կախումը հոսանքի զտման արագությունից ըստ հոսանքի պղնձի ելքի վրա (3000 Ա/մ², a=42 մմ, 150 գ/լ H₂SO₄.)



Նկ. 2. Հոսանքի խտության ազդեցությունը ըստ հոսանքի պղնձի ելքի վրա (50 °C, a=42 մմ, 160 գ/լ H₂SO₄.)



Նկ. 3. Միջլեկտրոդային հեռավորության ազդեցությունը ըստ հոսանքի, պղնձի ելքի վրա (50 °C, 2000 Ա/մ², 160 գ/լ H₂SO₄.)



Նկ. 4. Ծծմբական թթվի կոնցենտրացիայի ազդեցությունը ըստ հոսանքի, պղնձի ելքի վրա (50 °C, a=15 մմ, 2000 Ա/մ²)

Գիտափորձի արդյունքների հիման վրա, որպես կոմպլեքսային պղնձի, ուղղակի ռաֆինացման օպտիմալ ռեժիմ է ընտրված՝

- էլեկտրոլիզի ջերմաստիճանը՝ 50-55 °C,
- H₂SO₄-ի կոնցենտրացիան էլեկտրոլիտում՝ 180 գ/լ,
- հոսանքի խտությունը՝ 2000-2200 Ա/մ²,
- միջլեկտրոդային հեռավորությունը՝ 15 մմ:

Օպտիմալ պայմաններում (T=50°C, C_{H2SO4}=180 գ/լ, i=2000 Ա/մ², h=15 մմ) ստացված պղնձափոշին իր քիմիական կազմով չի զիջում MOOK, MO1 մակնիշների պղնձին՝ ԳՕՍՏ 8859-74-ով:

Գրականություն

1. Орлов А.К. Конвертирование медных штейнов. Огневое и электролитическое рафинирование меди. Гидрометаллургия меди. - Л.: Изд.-во ЛГИ, 1978. - 109 с.
2. Смирнов В.Ф. и др. Металлургия меди, никеля и кобальта. Ч.1. - М.: Металлургия, 1964. - 462 с.
3. Узкин Н.И. Металлургия цветных металлов. - М.: Металлургия, 1985. - 440 с.
4. Исаков В.Т. Электролиз меди. - М.: Металлургия, 1970. - 224 с.

ՄՈԼԻԲԴԵՆԻՏԱՅԻՆ ԽՏԱՆՅՈՒԹԻ ԹՐԾՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԴԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԵՎ ՄՈԼԻԲԴԵՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԵՌՈՔՄԻՂԻ ԱՍԱՑՈՒՄԸ

Ա. Դովհաննիսյան, Ա. Դովսեփյան, Ա. Խաչատրյան


Մոլիբդենիտային խտանյութի թրծման գործընթացի հետազոտման համար որպես ելանյութ ծառայել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի հարստացուցիչ ֆարրիկայում ստացված մոլիբդենիտային խտանյութը, որի միջին քիմիական կազմը բերված է աղյուսակում:

Բաղադրիչներ	Mo	Cu	Fe	S	SiO ₂	Al ₂ O ₃	CaO	Re	Այլ խտանյութեր
Պարունակություն, %	51.8	0.44	1.80	35.67	6.90	0.82	0.75	0.025	1.82


Մոլիբդենիտային խտանյութի վերամշակման համար արդյունաբերական լայն կիրառություն ունի օքսիդացուցիչ թրծումը, որի արդյունքում ստացվում է կիսաարուք: Այն պարունակում է մոլիբդենի եռօքսիդ և այլ խտանյութերի միացություններ, որը հումք է հանդիսանում ֆերոմոլիբդենի արտադրության, ինչպես նաև այլ քիմիական միացությունների ստացման համար: Մոլիբդենիտային խտանյութի թրծման ժամանակ տեղի են ունենում հետևյալ ռեակցիաները՝

- մոլիբդենիտի օքսիդացում եռօքսիդի առաջացմամբ;
- մոլիբդենի եռօքսիդի և մոլիբդենիտի փոխազդեցություն երկօքսիդի ստացմամբ;
- ուղեկցող սուլֆիդային միներալների օքսիդացում օքսիդների և սուլֆատների առաջացմամբ;
- մոլիբդենի եռօքսիդի և խտանյութերի օքսիդային միացությունների փոխազդեցությամբ մոլիբդատների առաջացում:

500 °C -ից բարձր ջերմաստիճանում մոլիբդենիտը ինտենսիվ փոխազդում է թթվածնի հետ առաջացնելով մոլիբդենի եռօքսիդ՝



Մոլիբդենիտի օքսիդացումը գնում է պինդ ֆազում, նույնիսկ, թթվածնի փոքր կոնցենտրացիայի պայմաններում: Օքսիդացման գործընթացում մոլիբդենիտի հատիկը պատվում է գոյացած մոլիբդենի եռօքսիդի թաղանթով, հետևաբար ռեակցիայի արագությունը որոշվում է օքսիդային թաղանթի կառուցվածքով, որի միջով թթվածինը և ծծմբային գազը պետք է դիֆուզվեն հակառակ ուղղություններով: 400-600 °C ջերմաստիճանում մոլիբդենիտը փոխազդում է թթվածնի հետ առաջացնելով մոլիբդենի երկօքսիդ, որը արագ փոխարկվում է եռօքսիդի: 550-600 °C ջերմաստիճանում մոլիբդենի երկօքսիդի առաջացումը կապված է մոլիբդենիտի փոխազդեցությամբ մոլիբդենի եռօքսիդի հետ [1,2]: 550-600 °C ջերմաստիճանում ընթացող ռեակցիաներն են՝



400 և 500 °C ջերմաստիճանում օքսիդացման արդյունքում ստացվում է միայն մոլիբդենի եռօքսիդ, որը պայմանավորված է ռեակցիայի արագացման պինդ թաղանթի կառուցվածքից, այսինքն MoS₂-ի օքսիդացման կինետիկայից և արագությունից: 550-600 °C ջերմաստիճանում մոլիբդենի եռօքսիդի թաղանթը ծակոտկեն է և դիֆուզիայի գործընթացին էական դիմադրություն չույց չի տալիս: Օքսիդացումն ընթանում է հաստատուն արագությամբ: Գործընթացն ընթանում է


կինետիկ շրջանով: 500 °C -ից ցածր ջերմաստիճաններում օքսիդային թաղանթն ավելի խիտ է, որի պատճառով գործընթացն ընթանում է դիֆուզիոն ռեժիմով: 400 °C ջերմաստիճանում օքսիդային թաղանթը խիտ է և մեխանիկորեն անջատում է միներալի մակերևույթը զագային ֆագայից և տեղի է ունենում մաքուր դիֆուզիոն ռեժիմ:

Մոլիբդենի դիսուլֆիդի և մոլիբդենի եռօքսիդի փոխազդեցությունը 400 °C ջերմաստիճանից բարձր ջերմաստիճաններում թթվածնի ոչ բավարար քանակության պայմաններում կատարվում է նկատելի արագությամբ, իսկ 550 °C ջերմաստիճանից բարձր՝ արագ [3]:


$MoS_2 + 6MoO_3$ խառնուրդի տաքացման ժամանակ արգոնի միջավայրում, 60 րոպեի ընթացքում ռեակցիայի մեջ է մտնում 45% խառնուրդ, իսկ 700 °C-ում՝ 90%: Քանի որ MoO_2 -ը քիչ է լուծվում ամիակաջրում կամ սոդայի լուծույթում, այդ իսկ պատճառով թրծման ռեժիմը պետք է տարվի այնպես, որ բացառվի կիսայրուքում MoO_2 -ի առկայությունը:

Մոլիբդենիտային խտանյութերի օքսիդացուցիչ թրծման ժամանակ խտանյութում գտնվող պղնձի, ցինկի, երկաթի և կապարի միներալների սուլֆիդները առաջացնում են օքսիդներ և մասամբ՝ սուլֆատներ: Սուլֆատների առաջացման ռեակցիաների կատալիզատորներ են հանդիսանում $SO_2 + 0,5O_2 \leftrightarrow SO_3$, պղնձի և երկաթի օքսիդները՝ հատկապես մոլիբդենի եռօքսիդը: Սուլֆատների առաջացմանը նպաստում է թրծման ցածր ջերմաստիճանը՝ 550 - 580 °C: Նշենք, որ երկաթի սուլֆատը բավական քանակությամբ դիսոցվում է 450 - 500 °C -ից բարձր, պղնձի սուլֆատը 600 - 650 °C-ից բարձր, իսկ ցինկի սուլֆատը 700 °C-ից բարձր ջերմաստիճաններում:


500 - 600 °C ջերմաստիճաններում մոլիբդենի եռօքսիդը փոխազդում է օքսիդների, կարբոնատների և սուլֆատների հետ առաջացնելով մոլիբդատներ՝



Առաջանում է նաև կալցիումի սուլֆատ հետևյալ ռեակցիայով՝




Մոլիբդատների առկայությունը նպաստում է կիսայրուքի հալմանը մոլիբդենի եռօքսիդի հալման ջերմաստիճանից ցածր ջերմաստիճանում, որը բացատրվում է մոլիբդատմոլիբ-





Նկ. Մոլիբդենիտային խտանյութի թրծման գործընթացի դերիվատոգրամները՝ TG-մոլիբդատի փոփոխությունն է կախված ժամանակից և ջերմաստիճանից, DTA- դիֆերենցիալ-թերմիկ վերլուծության կորն է, T, °C- գիծը ջերմաստիճանի ժամանակային ֆունկցիան է:


դենի եռօքսիդ էվտեկտիկայի առաջացմամբ




Կատարվել է մոլիբդենիտի թրծման գործընթացի դերիվատոգրաֆիական հետազոտություն, որը բերված է նկարում: Թրծման գործընթացում, բնականաբար, օքսիդանում են մոլիբդենին ուղեկից ռենիումը և խառնուրդ սուլֆիդները, առաջացնելով համապատասխան մետաղների օքսիդներ.



Տաքացման ընթացքում տեղի ունեցող հիմնական փոխազդեցությունը մոլիբդենի դիսուլֆիդի օքսիդացման ռեակցիան է՝



որի թերմոդինամիկական հավանականությունը պայմանավորված է ռեակցիայի ազատ էներգիայի փոփոխության շատ մեծ բացասական արժեքով՝



Ձանգվածի փոփոխության կորից (TG) երևում է, որ խտանյութը մինչև 120-122 °C տաքացնելիս գոլորշիացնում է լիովին հեռանում է նրանում պարունակող խոնավությունը: Ձանգվածի հետագա փոփոխությունը՝ 223-320 °C ջերմաստիճանային տիրույթում, հավանականորեն տեղի է ունենում մագնոդային ֆլոտացիոն ռեագենտների գոլորշիացման հետևանքով:

Դիֆերենցիալ-թերմիկ վերլուծության կորի (DTA) վրա այդ գործընթացը ցայտուն արտահայտված է համապատասխան էնդոթերմիկ էֆեկտով:

Մոլիբդենի դիսուլֆիդի և թթվածնի փոխազդման ռեակցիայի զարգացումն սկսվում է 380 °C-ից, այնուհետև 420 °C-ից ինտենսիվորեն ընթանալով ավարտվում է 585 °C-ում: Դա ակնհայտ է DTA կորի վրա ցայտուն արտահայտված էկզոթերմիկ էֆեկտով:

Սակայն խտանյութում նրանց փոքր պարունակության պատճառով զանգվածի փոփոխություն և դիֆերենցիալ-թերմիկ վերլուծության կորերի վրա առանձին էֆեկտներ չեն նկատվում:

DTA կորի սլյալներից երևում է նաև, որ խտանյութի թրծման գործընթացն ուղեկցվում է ցայտուն արտահայտված էկզոթերմիկ էֆեկտով և արդեն 600 - 610 °C ջերմաստիճաններում MoS_2 -ի փոխակերպումը MoO_3 -ի գործնականորեն անհետադարձելի է: Ռեակցիայի ուժգին էկզոթերմիկությունը իր հերթին նպաստում է նաև թրծման ազդեգատի ջերմային հաշվեկշիռին՝ թույլ չտալով ունենալ վառելանյութի մեծ ծախս:

Ռենտգենակառուցվածքային հետազոտության տվյալներով, խտանյութի թրծման գործընթացի արդյունքում ստացված արգասիքը, հիմնականում, մոլիբդենի եռօքսիդն է:

Այսպիսով անկախ այն բանից, թե ինչպիսի արտադրանք պետք է ստանալ մոլիբդենիտային խտանյութի վերամշակումից, սկզբնական տեխնոլոգիական օպերացիան հանդիսանում է օքսիդացուցիչ թրծումն է, որի արդյունքում ստացվում է կիսայրուք՝ բաղկացած մոլիբդենի եռօքսիդից:

Գրականություն

1. Зеликман А.Н. Молибден. - М.: Металлургия, 1970.
2. Зеликман А.Н., Беляевская Л.В. // ГИИХ. - 1956. - Т.1, в.10. - С.2245-2256.
3. Ջաքարյան Ֆ.Յ. Քաջարանի մագնետիտային և մոլիբդենիտային խտանյութերի ֆերոմոլիբդենի ստացման տեխնոլոգիայի մշակումը այլումինաթերմիկ եղանակով. Տեխ. գիտ.թեկնածուի գիտական աստիճանի սեղմագիր. - Երևան, 2004. - 20 էջ:


**ՄՈԼԻԲԴԵՆԻ ԽՏԱՆՅՈՒԹԵՐԻՑ ԲԱՐՁՐ ՍԱՔՐՈՒԹՅԱԲ ՄՈԼԻԲԴԵՆԻ
ՂԻՍԻԼԻԳԻՂԻ ԱՏԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴՅԵՏԱԶՈՏՈՒԸ**

Ա. Գրիգորյան, Ա. Գրիգորյան, Ա. Գրիգորյան

Մոլիբդենի դիսիլիցիդը 1300-1800°C ջերմաստիճաններում օժտված է բարձր կիզակայունությամբ (օքսիդացմանը դիմադրելու ունակությամբ) [1]: Այն գործնականորեն կայուն է հանքային թթուների (H₂SO₄, HF, HCl, HNO₃) նկատմամբ, սակայն հեշտությամբ լուծվում է ազոտական և ֆտորաջրածնային թթուների խառնուրդների մեջ: 1000°C ջերմաստիճանում MoSi₂-ը կայուն է SO₂, CO₂, NO₂ գազերի և հալված մետաղների նկատմամբ (Na, K, Zn, Sn, Sb, Cu և այլն): Մոլիբդենի դիսիլիցիդը համալիր լիգատուրա է և ունի թթվածնագտող հատկություն պողպատների արտադրության ժամանակ:

Նշված հատկությունների շնորհիվ մոլիբդենի դիսիլիցիդը լայն կիրառություն է գտել տեխնիկայի և արդյունաբերության հետևյալ ճյուղերում.

- **Տաքացուցիչների արտադրությունում**, որտեղ օգտագործվում է որպես նյութ, օդի և ազոտիվ գազի միջավայրերում շահագործվող բարձր ջերմաստիճանային էլեկտրավառարանների տաքացուցիչների պատրաստման համար;
- **Պողպատի արտադրությունում**՝ որպես լեգիրող կոմպոնենտ, ֆեռոմոլիբդենի փոխարեն;
- **Ծածկուրապատման համար**՝ մոլիբդենից պատրաստված իրերի վրա քիմիապես կայուն և կիզակայուն ծածկույթների ստացման համար;
- **Ջերմափոխանակիչների պատրաստման ժամանակ**, որպես նյութ, ատոմային կայանքներում տեղի ունեցող պրոցեսների ժամանակ անջատվող ջերմության հեռացման համար նախատեսված ջերմափոխանակիչների պատրաստման համար և այլն;
- Մոլիբդենի դիսիլիցիդը ստացվում է հետևյալ եղանակներով [2].




Նկ.1. Բարձր մաքրությամբ մոլիբդենի դիսիլիցիդի ստացման տեխնոլոգիան

Սինթեզ էլեմենտներից, այլուժ-սիլիկաջերմային մեթոդով, պղնձ-սիլիցիդային մեթոդով, կարբոթերմիկ մեթոդով, նըստեցում գազային ֆազերից, նստեցում քլորիդների խառնուրդներից և այլն:

Թվարկված մեթոդներով մոլիբդենի դիսիլիցիդի ստացման ժամանակ օգտագործվում է կամ մաքուր մետաղական մոլիբդենի փոշի կամ մոլիբդենի եօքսիդ, որոնց ստացման համար մոլիբդենի դիսուլֆիդը ենթարկվում է թրծման: Թրծման արդյունքում մթնոլորտ է արտանետվում զգալի քանակությամբ ծծմբային գազեր (SO₂, SO₃)՝ աղտոտելով այն: Բացի այդ, այրման ժամանակ կորչում են մեծ քանակությամբ էլեմենտներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի ընդերքը հարուստ է մոլիբդենի դիսուլֆիդով, հետազոտվել է MoS₂-ից սիլիկաջերմային մեթոդով մոլիբդենի դիսիլիցիդի ստացման մեթոդիկան: Մոլիբդենիտային խտանյութից մոլիբդենի դիսիլիցիդի ստացման տեխնոլոգիան բերված է նկ.1-ում:

Ինչպես գիտենք, մոլիբդենիտային խտանյութը, բացի հիմնական նյութից (Mo), պարունակում է նաև մեծ քանակությամբ խառնուրդներ (Cu, Fe, Zn, Al₂O₃, SiO₂, MgO և այլն), որոնք իջեցնում են ստացվող մոլիբդենի դիսիլիցիդի հատկությունները: Այդ խառնուրդների պարունակության իջեցման համար կատարվել է մոլիբդենիտային խտանյութի մաքրում [3]: Մաքրման առաջին փուլում կատարվել է ֆլուտոռեագենտների հեռացում և շլամագերծում: Մաքրման երկրորդ փուլում խառնուրդների հեռացման համար, կատարվել է խտանյութի քիմիական մշակում, որից հետո նստվածքը չորացվել է մինչև կշռի կայունացումը:



Մաքրումից հետո կատարվել է ստեխիոմետրիկ քանակի ելանյութերի MoS₂-ի և Si-ի խառնում: Ստացված խառնուրդից մամլման ճանապարհով պատրաստվել են բրիկետներ, ապա կատարվել է սինթեզ, որը տարվել է ջրածնի միջավայրում: Սինթեզի ժամանակ տեղի է ունենում հետևյալ ռեակցիան.

Ռեակցիայի արդյունքում մոլիբդենը միանում է սիլիցիումի հետ և առաջանում մոլիբդենի դիսիլիցիդ, իսկ ծծումբը սիլիցիումի սուլֆիդների (SiS, SiS₂) տեսքով ամբողջությամբ հեռանում է ռեակցիայի տարածքից և կոնդենսում սառնարանում: Առաջացած սիլիցիումի սուլֆիդները, նույնպես, կիրառելի են: Դրանք կարող են փոխարինել Na₂S-ին, որպես ֆլուտոռեագենտ պղնձ-մոլիբդենային հանքանյութերի հարստացման գործընթացում:

Փորձերը կատարվել են 800-1200 0C -ում և տարբեր տևողությամբ (60, 90, 120 րոպե): Քիմիական և ռենտգենոֆազային վերլուծության միջոցով պարզվել է, որ 1150 0C-ում և 1ժամ տևողությամբ եռակայան դեպքում ստացվում է բարձր մաքրությամբ մոլիբդենի դիսիլիցիդ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրականությունում եղած մեթոդների հետ համեմատած, մոլիբդենիտային խտանյութից սիլիկաջերմային մեթոդով MoSi₂-ի ստացումը ունի մի շարք առավելություններ:

Ղիսիլիցիդը ստացվում է անմիջապես խտանյութից (MoS₂) և գործընթացը էկոլոգիապես պաշտպանված է:

Գրականություն

1. Самсонов Г. В., Дворина А. А., Рудь Б. М. Силициды. - М.: Металлургия, 1979.
2. Зеликман А. Н. Молибден. - М.: Металлургия, 1970.
3. Овсянян А. О., Айрапетян Г. М., Минасян С. А. // Изв. НАН РА и ГИУА. Сер. Т. Н. - 2004. - Т. LVII, № 2. - С. 256.

**ՔԱԶԱՐԱՆԻ ԵՎ ԿԱՊԱՆԻ ՊՂՆՁԱՅԻՆ ԽՏԱՆՅՈՒԹԵՐԻ
ՓՈԽԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԴՅԵՏՎԱՆՔՈՎ**
Վ.Սարտիրոսյան, Տ.Աղամյան

Պինդֆազ քիմիական ռեակցիաներն ընկած են շատ քիմիական և մետալուրգիական արտադրական գործընթացների հիմքում: Այդ ռեակցիաների բնորոշ առանձնահատկությունը դրանց փոքր արագություններն են: Այդ պատճառով փնտրվում են ռեակցիոն պինդ նյութերի ակտիվության բարձրացման նոր եղանակներ, որոնք կբերեն պինդֆազ ռեակցիաների արագության մեծացման: Այդ տեսակետից ժամանակակից էֆեկտիվ եղանակ է համարվում մեխանաքիմիական ակտիվացումը, որի հիմքում ընկած է նյութերի նուրբ մանրացումը:

Ներկա աշխատանքում բերվում են պղնձ պարունակող ամենաբնորոշ սուլֆ-

իրային միացություններից մեկի՝ խալկոպիրիտային խտանյութի մեխանիկական փոխարկումները չոր, թաց և կոմբինացված մանրացման ընթացքում: Ուսումնասիրվել են Հայաստանի Շահումյանի տեղայնքի Կապանի (փորձանմուշ 1) և Քաջարանի (փորձանմուշ 2) խտանյութերը, ինչպես նաև համեմատության համար վերցված են նաև խալկոպիրիտային տալունային նմուշներ: Սանրացումը կատարվել է պլանետար վիբրացիոն լաբորատոր աղացում: Ստացված նմուշները (50գ), ենթարկվել են մաղային, ռենտգենաֆազային և քիմիական վերլուծության: Ջրով մշակման դեպքում չորացումը կատարվել է չորացնող պահարանում՝ 90...100°C ջերմաստիճանում:

Խալկոպիրիտը պղնձային հանքերի հիմնական միներալն է և նրա մեխանիկական մշակման արդյունքները կարևոր գործնական նշանակություն կարող են ունենալ ինչպես պիրոմետալուրգիական, այնպես էլ հիդրոմետալուրգիական մշակման գործընթացներում: Միներալոգիական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խտանյութերը բաղկացած են հետևյալ միներալներից՝ խալկոպիրիտ ($CuFeS_2$) -60%, խալկոզին (Cu_2S) -8%, պիրիտ (FeS_2) -5%, կովելին (CuS) -5%, տենորիտ (CuO) -4% և բորնիտ Cu_5FeS_4 -3%:

Բացի խալկոպիրիտից կա նաև պենտալանդիտ և կարանիտ: Վերջիններս հազվագյուտ են հանդիպում խալկոպիրիտում: Շատ ավելի հաճախ հանդիպում է պիրոնիտը: Պիրիտը հանդիպում է ազատ հատիկների ձևով:

Ռենտգենաֆազային վերլուծության տվյալները հաստատում են միներալոգիական հետազոտության տվյալները: Դիֆրակտագրամներում հստակ ֆիքսվում են $d=1,772$; $5,79$ Å գծերը, որոնք բնորոշ են պենտալանդիտին:

Ելանյութ նմուշների դիֆրակտոգրամներում կան նաև $d=3,21$ և $3,11$ Å ռեֆլեքսներ, որոնց քանակներն, ըստ ինտենսիվության, շատ չեն: Հիմնական գծերը համընկնում են տալունի հետ, բայց տարբերվում են ինտենսիվությամբ:

Միներալոգիական և ռենտգենաֆազային վերլուծության տվյալները բավական լավ համընկնում են քիմիական վերլուծության տվյալներին: Այսպես, պենտալանդիտի և պիրիտի քանակները հաստատվում են և քիմիական վերլուծության տվյալներով՝ պիրիտ -5%, խալկոզին -8%, տալունային խալկոպիրիտի քիմիական վերլուծության արդյունքներն են՝ 26,29% Cu; 31,78% Fe; 33,78% S; $\Sigma 91,85\%$: Քաջարանի պղնձային խտանյութինը՝ Cu 15,68%; Fe 18,64%; S 20,0%; $\Sigma 54,32\%$: Կապանինը՝ Cu 16,01%; Fe 28,29%; S 34,72%; $\Sigma 77,02\%$: մնացածը երկու դեպքում SiO_2 և CuO :

Մեխանիկական մշակումից հետո զգալի փոփոխվում են խալկոպիրիտային խտանյութի բնութագրերը: Ռենտգենագրամներում 30ր ակտիվացումից հետո նկատվում են նոր ռեֆլեքսներ $d=4,36$; $3,99$ Å, որոնք հաստատում են $CuSO_4 \cdot 5H_2O$ -ի առկայությունը: Cu-ի, Fe-ի և S-ի քանակները նվազում են և, համեմատած ելանյութի հետ, համապատասխանաբար՝ 2,54; 3,35; 2,89%, կամ գումարային 8,48%-ով:

Ջրային միջավայրում 30ր ակտիվացնելիս խալկոպիրիտի և պենտալանդիտի կառույցները քայքայվում են, որը երևում է $CuFeS_2$ -ի $d=1,870$ և $1,855$ Å գծերի ինտենսիվությունից (պենտալանդիտում $1,772$ և $5,79$ Å): Բացի $CuSO_4 \cdot 5H_2O$ ֆազայից, որի քանակը մանրացնելիս ավելանում է, առաջանում է և նոր ֆազա $4Fe_2(SO_4)_3 \cdot 5Fe_2O_3 \cdot 27H_2O$, որի լավ բյուրեղացման արդյունքը $d=3,12$ և $5,08$ Å գծերի սուր ձևն է: Այսինքն մանրացման հենց սկզբնական փուլում տեղի ունի էֆեկտիվ մեխանիկական ակտիվացիա: Հետագա մանրացումից $4Fe_2(SO_4)_3 \cdot 5Fe_2O_3 \cdot 27H_2O$ ֆազան դառնում է ավելի բյուրեղացած, որը հաստատվում է $d=3,08$ Å գծի սուր ռեֆլեքսով և $d=4,73$ Å ռեֆլեքսով, որը բնորոշ է $CuSO_4 \cdot 5H_2O$ -ին:

Մոլյուսակ 1
Խալկոպիրիտային խտանյութերի ռենտգենագրամները

Գծ	Փորձանմուշներ				Էտալոն, ASTM			
	Փորձանմուշ 1		Փորձանմուշ 2		9...423, խալկոպիրիտ		6...0710, պիրիտ	
	d	l	D	l	d	l	d	L
1.	-	-	-	-	-	-	-	-
2.	3,04	100	3,04	100	3,03	100	-	2,6
3.	-	-	-	-	-	-	-	-
4.	2,65	10	2,64	14	2,63	5	2,709	84
5.	-	-	-	-	-	-	-	-
6.	-	-	-	-	-	-	2,423	66
7.	-	-	-	-	-	-	2,2118	52
8.	1,865	40	1,862	79	1,865	40	1,9155	40
9.	1,857	42	-	-	1,854	80	-	-
10.	-	-	-	-	-	-	-	-
11.	1,594	27	1,591	35	1,591	60	1,6332	100
12.	1,578	12	-	-	1,573	20	-	-
13.	-	-	-	-	-	-	-	-
14.	-	-	1,317	9	-	-	1,5025	20
15.	-	-	1,211	10	-	-	-	-
16.	-	-	-	-	-	-	-	-
17.	-	-	1,077	10	1,077	6	-	-

Ուշադրություն է գրավում և $d=1,843$ Å գծը, որը 30ր ակտիվացնելիս բնորոշ է լավ բյուրեղացած մագնետիտային ֆազին: Բացի այդ, նկատվում է խալկոպիրիտի և պենտալանդիտի ռեֆլեքսների նվազեցում և կլորացում, որը խտում է ամորֆ վիճակի անցման հետ:

Ավելի էֆեկտիվ է օդում և ջրում կոմբինացված մեխանիկական մշակումը: 30ր հետո ռենտգենագրամում հիմնական ֆազը դառնում է $4Fe_2(SO_4)_3 \cdot 5Fe_2O_3 \cdot 27H_2O$: Ակտիվացման ժամանակի աճի հետ այդ ֆազի քանակը ավելի զգալի է նվազում քան մնացած $CuFeS_2$ -ը, իսկ ավելի մանրացնելիս՝ 60ր, նրա քանակը նորից գերակշռում է: Սեր ստացած $4Fe_2(SO_4)_3 \cdot 5Fe_2O_3 \cdot 27H_2O$ -ի և տալունի գծերի ինտենսիվությունների հարաբերությունները զգալի տարբեր են: Եթե տալունում հիմնական գծերն են $5,11^{100}$; $3,13^{90}$ և $3,09^{90}$, ապա մեր նմուշում նրանց հարաբերությունը հակառակ ձևով է ընկած: Միաժամանակ, միջհարթությունների միջև եղած հեռավորությունը այդ ֆազի և $Cu_9Fe_9S_{16}$ (մուխուկիտ) ինտենսիվությունները հավասար են և ընկած են $3,08$ Å-ի վրա: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ մեխանիկական մշակումից $CuFeS_2$ -ը վեր է ածվում $Cu_9Fe_9S_{16}$ ձևի: Դա հիմնավորվում է նրանով, որ խալկոպիրիտը մեխանիկական մշակման ժամանակ կորցնում է իր S-ի մի մասը:

Ամիրաժեշտ է նշել Fe_3O_4 -ի բավական կատարյալ բյուրեղային ֆազի առաջացումը ավելի երկար ժամանակով մշակման արդյունքում:

Քիմիական անալիզի արդյունքներից երևում է, որ ակտիվ ֆրակցիան խալկոպիրիտի և նրա մեխանիկական ակտիվացման արդյունքում ստացված նյութերի խառնուրդ է (աղյուսակ 2): Հիդրատացված սուլֆատների առկայությունը հաստատում է այն փաստը, որ Fe-ի և Cu-ի հիդրատացված սուլֆատների առաջացումից էլեմենտների քանակությունը կազմում է 54,32%, 91,85 ելանյութի հետ համեմատած:

Խալկոպիրիտային խտանյութի մեխանիկական մշակման արդյունքները

Գիծ	Էտալոն, ASTM																
	Փորձա- նմուշ 1		18...615 4Fe ₂ (SO ₄) ₃ 5Fe ₂ O ₃ 27H ₂ O				11...646 CuSO ₄ 5H ₂ O				26...1288 Fe ₃ O ₄						
	d	l	d	l	d	l	d	l	d	l	d	l					
1.	5,95	12	5,97	40	-	-	5,83	13	20.	2,78	6	-	-	2,79	20	2,78	10
2.	5,48	14	-	-	5,48	55	5,43	19	21.	2,74	11	-	-	2,75	50	-	-
3.	5,10	72	5,11	100	5,15	25	5,07	20	22.	2,71	8	-	-	2,72	15	-	-
4.	4,91	12	-	-	-	-	4,92	25	23.	2,68	8	-	-	2,69	9	-	-
5.	4,84	15	-	-	4,84	10	4,82	20	24.	2,58	10	-	-	2,58	5	2,57	11
6.	4,78	30	-	-	4,73	100	-	-	25.	2,56	15	2,55	40	2,56	71	-	-
7.	4,34	24	-	-	-	-	4,38	100	26.	2,52	10	-	-	2,53	5	2,51	10
8.	4,12	3	-	-	-	-	4,12	10	27.	2,42	7	-	-	2,42	40	2,40	10
9.	3,99	30	-	-	3,99	60	4,00	60	28.	2,27	23	2,27	60	2,28	3	2,28	17
10.	3,70	22	3,68	40	3,71	85	-	-	29.	1,985	28	1,987	60	1,981	9	1,992	20
11.	3,54	5	3,54	20	3,54	20	-	-	30.	1,832	12	1,986	40	1,933	9	1,932	20
12.	3,45	22	-	-	3,45	17	3,44	10	31.	1,801	19	1,895	20	1,800	11	1,808	8
13.	3,29	12	-	-	3,30	60	-	-	32.	1,837*	28	1,838	60	-	-	-	-
14.	3,17	10	-	-	3,18	17	3,18	13	33.	1,701	5	1,771	10	-	-	-	-
15.	3,12	75	3,13	90	-	-	-	-	34.	1,594*	8	1,596	40	-	-	-	-
16.	3,08	100	3,09	90	-	-	-	-	35.	1,584	11	1,586	20	-	-	-	-
17.	3,04*	47	-	-	3,05	30	-	-	36.	1,564	7	1,566	10	-	-	-	-
18.	2,90	15	-	-	2,90	11	2,83	33	37.	1,511	8	1,505	60	-	-	-	-
19.	2,84	19	2,84	40	2,82	40	2,82	13									

Ինչպես երևում է, երկու նմուշներում մեխանիկական ակտիվացման հետևանքով ընթանում են նմանատիպ ֆազային փոխարկումներ:

Ամփոփելով ֆիզիկաքիմիական փոխարկումների արդյունքները, կարելի է նշել, քննարկված երկու նմուշներում էլ սուլֆիդները մանրացնելիս ենթարկվում են խորը քիմիական փոխարկումների, որոնք կապված է ինչպես ֆազային, կառուցվածքային, այնպես էլ քիմիական բաղադրության փոփոխությունների հետ: Առաջանում են Fe₂(SO₄)₃·4Fe₂O₃·27H₂O և CuSO₄·5H₂O, ինչպես նաև մագնետիտ, որը դառնում է որոշիչ այդ գործընթացի վերջում:

Ստացված ակտիվացված նմուշները շնորհիվ իրենց քիմիական ակտիվության, կենթարկվեն հետագա օքսիդացման և վերականգնման գործընթացների, համեմատաբար ցածր ջերմաստիճաններում:

Այսպիսով, հունքային միներալների և հանքանյութերի մեխանիկական ակտիվացումը կարելի է ընդունել որպես պիրո- և հիդրոմետալուրգիական գործընթացների ինտենսիֆիկացման արդյունավետ եղանակներից մեկը, որը դեռ գործնական կիրառում չի գտել, բայց ունի հեռանկարային մեծ արժեք:

Քանի որ շատ գունավոր մետաղների սուլֆատները լուծելի են ջրում, կարելի է կատարել հանքանյութերի նախնական հարստացում:

Գրականություն

1. Колебакин В.Г. Превращения сульфидов при активации. – Новосибирск: Наука, 1983. – С. 208.
2. Колебакин В.Г., Юсупов Т.С. Некоторые физико-химические особенности тонкодисперсного халькопирита. Т.108, вып.305 – Новосибирск: 1986. – С. 219-223.
3. Аввакумов Е.Г., Болдырев В.В., Кособутский И.И. Механохимическая активация твердых реакций // Изв. СО АН ССР, Сер. хим. наук. Вып.4. – 1982. – С. 45-50.
4. Голосов С.И., Молчанов В.И.. Центробежная планетарная мельница, ее технические возможности и применение в практике геологических исследований: В. кн. Физ. хим. изменения минералов в процессе сверхтонкого измельчения. –Новосибирск: изд. ИГ и Г, 1986. – С. 5-25.

ТЕРМОХИМИЧЕСКОЕ РАЗЛОЖЕНИЕ ЗОЛОТО-МЕДНОГО СУЛЬФИДНОГО СЫРЬЯ В ПЛАЗМЕ

Г. Григорян, А. Абрамян, В. Мирзоян

Работа посвящена разработке перспективной технологии эффективной переработки золото-медного сульфидного сырья на примере Капана, Дрмбона, Личкваса.

Приведенный в табл. 1,2 вещественный состав сырья выявлен аналитико-расчетным методом. Согласно правилу аддитивности минералы (табл.2) - халькопирит (CuFeS₂), халькозин (Cu₂S), пирит (FeS₂) можно представить в виде усредненного монокомплекса типа Cu_{1,5}Fe₃S₆ со следующими термодинамическими параметрами: энтальпия – 168 кДж/моль и энтропия +63 Дж/моль·град [1]. Остальные минералы сырья являются окислами и карбонатами. Золото, серебро, селен, теллур, висмут связаны с сульфидными минералами

Таблица 1


Сырье	Химический состав												
	%							г/м					
	Cu	Fe	S	CaO	MgO	CO ₂	O ₂	пр.	Au	Ag	Se	Te	Bi
Капанский концентрат	18	21	34	1,0	1,0	1,9	1,0	12,1	10	80	100	120	150
Дрмбонский концентрат	17	30	32	2,0	1,0	2,66	1,45	13,89	50	60	200	2	1
Личкваская руда	2	8	9	4,0	3,0	6,45	0,19	59	5	40	20	30	100

Таблица 2

Сырье	Минералогический состав, %								
	CuFeS ₂	Cu ₂ S	FeS ₂	Fe ₂ O ₃	CaCO ₃	MgCO ₃	Al ₂ O ₃	SiO ₂	пр.
Капанский концентрат	36,5	6,7	37	3,3	1,8	2,1	3,0	6,0	3,6
Дрмбонский концентрат	34	6,4	35	4,8	3,56	2,1	1,0	7,0	6,04
Личкваская руда	4,0	0,75	13,8	0,64	7,15	6,3	6,0	53	8,36

В настоящее время руды Капана и Дрмбона перерабатываются многостадийными сложными процессами. При этом используется всего 3-5 % ценного сырья, остальные 95-97 % выбрасываются в окружающую среду, что экономически и экологически невыгодно. В этой связи требуется разработать более приемлемую технологию переработки сырья.

Вещественный состав сырья (табл.1,2) предопределяет возможность его прямого термохимического разложения в низкотемпературной плазме по следующей суммарной реакции:



Ход реакции определяется термодинамикой и кинетикой в зависимости от температуры. Используются все продукты реакции, кроме CO₂.

Благодаря высоким коэффициенту использования энергии (80-90 %), скорости нагрева (10⁹ К/с), теплосодержанию (10⁴ кДж/кг) и незначительному времени контакта плазмы с частицами (10⁻³-10⁻⁵ с) происходит мгновенное превращение сырья. Это позволяет применять компактные реакторы с минимальными размерами и высокой производительностью, следовательно,

значительно сокращаются капитальные и эксплуатационные расходы и снижается себестоимость переработки сырья [2, 3].

В табл. 3 приведены результаты термо-химического анализа реакции разложения основных минералов сырья. В столбце "Т К" приведены температуры, при которых ход реакции отсутствует ($\Delta Z=0$). В других двух столбцах приведены значения изобарных потенциалов реакции ($\Delta Z \cdot 10^{-3}$ ккал) в необходимых для процесса температурных условиях: 1723 К (температура остальной части реактора вне плазмы) и 2723 К (температура плазмы).

Приведенные температуры процесса определены из потребных температур, которые обеспечивают разложение Cu_2S и FeS_2 (реакц. 5, 6) в плазме и образование, разделение серо-шлако-металлических продуктов в остальной части реактора. Таким образом термо-химическое превращение сырья происходит в одном компактном реакторе: в плазме разлагаются сульфиды и карбонаты по реакциям 1-6, а вне плазмы, в остальной части реактора, завершаются образование и разделение продуктов процесса. Согласно реакции 11 образование сернистого ангидрида вне плазмы исключается.

Согласно уравнению упругости испарения: $\lg P_{Fe} = -18000/T + 9$ мм рт. ст. и при температуре кипения 3343 К, железо, выделяемое по реакции 6, не испаряется, оно окисляется по реакциям 7, 11, 12, 13 (табл. 3) и с окислами Ca, Mg, Si, которые согласно реакциям 8, 9, 10 не разлагаются, образует шлаковый комплекс типа $-FeO_x(SiO_2)_yCaO_mMgO_n$. Газообразная сера, полученная по реакциям 1, 2, 5, 6, 11, и шлаковый комплекс непрерывно удаляются из реактора.

Согласно уравнениям упругостей испарения:

$$\lg P_{Cu} = -24438,4/T + 12,344; \quad \lg P_{Au} = -18016/T + 8,8833;$$

$$\lg P_{Ag} = -14584/T + 1,274 \lg T + 13,188, \text{ мм.рт.ст.}$$

и температурам кипения: 2843 К; 3223 К; 2473 К соответственно медь, золото, серебро в процессе не испаряются и образуют донный металлический продукт, который периодически удаляется из реактора.

Таблица 3

Ход реакции термохимического разложения основных минералов золотомедного сульфидного сырья в зависимости от температуры

NN реакции	Ход реакции	Уравнения изобарных потенциалов: ΔZ	Т К		
			$\Delta Z=0$	1723 К	2723 К
1	$4CuFeS_2 \rightarrow 2Cu_2S + 4FeS + S_2$	67000-122T	550	-143	-263
2	$2FeS_2 \rightarrow 2FeS + S_2$	69000-60T	1160	-35	-94
3	$CaCO_3 \rightarrow CaO + CO_2$	42000-40T	1080	-27	-40
4	$MgCO_3 \rightarrow MgO + CO_2$	24000-41T	590	-47	-88
5	$2Cu_2S \rightarrow 4Cu + S_2$	71000-30T	2360	19	-11
6	$2FeS \rightarrow 2Fe + S_2$	77000-34T	2250	18	-16
7	$2FeO \rightarrow 2Fe + O_2$	12800-35T	3660	68	33
8	$SiO_2 \rightarrow Si + O_2$	210000-44T	4800	144	90
9	$2CaO \rightarrow 2Ca + O_2$	302000-50T	6000	215	166
10	$2MgO \rightarrow 2Mg + O_2$	288000-52T	5550	198	147
11	$2SO_2 + 4Fe \rightarrow 4FeO + S_2$	-83000+36T	2340	-21,5	14
12	$Fe_2O_3 + Fe \rightarrow 3FeO$	4000-12T	335	-16,7	-29,6
13	$Fe_3O_4 + Fe \rightarrow 4FeO$	11000-10T	1100	-6,23	-16,23
14	$Fe_2O_3 + 2Cu \rightarrow Cu_2O + 2FeO$	28000-11T	2550	9	-2
15	$Fe_3O_4 + 2Cu \rightarrow Cu_2O + 3FeO$	35000-9T	3900	19,5	11,5

Окисление меди по реакциям 14,15 (табл. 3) не происходит, и ее оксидные потери со шлаками исключаются. Однако из-за неполного разделения донных расплавленных шлако-металлических фаз возможен механический унос со шлаками короки металлической меди с растворенными в ней золотом и серебром. Доказана возможность плазменного разложения сырья.

Литература

1. Григорян Г.Б., Григорян Г.Г. О возможности прямого получения меди из сульфидных концентратов // Изв. НАН и ГИУА. Сер. ТН - 1999. - N2. - С. 259-262
2. Современное состояние плазменной технологии и экономическая целесообразность ее реализации // Цветная металлургия. ЦНИИ Экономика и информация цветной металлургии. Серия экономика цветной металлургии. - М., 1991. - Вып. 3. - 36 с.
3. Дембовский В. Плазменная технология. - М. Металлургиздат, 1981. - 280 с.


ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԱԼԵՐԻՏԻ ԾՏՄԲԱԹԹՎԱՅԻՆ ՏԱՐՐԱԼՈՒԾՄԱՆ ԿԻՆԵՏԻԿԱՅԻ ՎՐԱ

L. Սարգսյան, Ա. Դովիանցիսյան, Թ. Ավագյան

Հանքային խտանյութերում ցինկը հիմնականում հանդես է գալիս սֆալերիտ միներալի տեսքով (ZnS): Ցինկի արտադրական տեխնոլոգիաների վերլուծությունը ցույց է տալիս, որ սուլֆիդային խտանյութերից ցինկի կորզումը առավել նպատակահարմար է իրականացնել հիդրոմետալուրգիական եղանակով, որի հեռանկարայնությունը տեղական բազմամետաղական հումքի վերամշակման ասպարեզում պայմանավորված է դրանում պարունակվող տարրերի համալիր կորզման մեծ հավանականությամբ [1]:


Ավանդական հիդրոմետալուրգիայում ցինկի սուլֆիդային խտանյութերի վերամշակումը սկզբունքորեն իրականացվում է <բովում-տարրալուծում-էլեկտրակորզում> տեխնոլոգիական ցիկլով, համաձայն որի, խտանյութը չորացվում է, այնուհետև բովվում: Բովվածքը ենթարկվում է տարրալուծման ծծմբական թթվի թույլ ջրային լուծույթով, որի հետևանքով ցինկը պղնձի և կադմիումի հետ միասին անցնում է լուծույթ, իսկ ազնիվ մետաղները մնում են ստրախցուկում: Լուծույթը, պղնձի և կադմիումի ներմուծանքներից մաքրելուց հետո, ենթարկվում է էլեկտրոլիզի՝ մետաղական ցինկի կորզման նպատակով:

Նախնական հետազոտություններով՝ ճշգրիտ թերմոդինամիկայի տեսանկյունից, հիմնավորված է ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ բազմամետաղական սուլֆիդային խտանյութերից ցինկի ուղղակի հիդրոմետալուրգիական կորզման գործընթացը (չրջանցելով ավանդական բովման օպերացիան): Բացահայտված է, որ ծծմբական թթվի թույլ ջրային լուծույթում թթվածնի ցածր ճնշման պայմաններում հնարավոր է օքսիդացնել սֆալերիտը և տարրալուծել ցինկը: Պրոցեսի հիմնական ռեակցիան հետևյալ տեսքի է՝



որի հետևանքով գոյացած սուլֆատային միացությունները լավ լուծելի են ջրում: Հետազոտությունների համար որպես ելանյութ է ընտրված Դինո Գուլ Մայնինգ Բանինի ՓԲԸ հանքահարստացուցիչ ֆաբրիկայի թողարկած ցինկային խտանյութը՝ առաքման ենթակա կշռաբաժիններից: Ռենտգենակառուցվածքային վերլուծության եղանակով ցինկի խտանյութի միներալոգիական կազմում հաստատագրված են հիմնական սուլֆիդային ֆազերը՝ ZnS-ը և $Cu_9Fe_9S_{16}$ -ը: Քիմիական վերլուծության եղանակով որոշված է խտանյութի հիմնական տարրի՝ ցինկի, ինչ-

պես նաև ուղեկցող արժեքավոր մետաղների տոկոսային պարունակությունը (Zn-50%, Fe-2%, Pb-1,1%, Cu-0,5%, S-31,5%, Au-7,8գ/տ, Ag-120,8գ/տ):



Նկ. Ծծմբական թթվի 10%-անոց ջրային լուծույթում սֆալերիտի ուղղակի տարրալուծման կինետիկան

Գիտավորժի առաջին մասում խտանյութը ուղղակիորեն (առանց բովման) տարրալուծվել է ծծմբական թթվի 10%-անոց լուծույթում, 30 ժամվա ընթացքում, 70°C ջերմաստիճանում, անընդհատ խառնման պայմաններում: Ինչպես երևում է բերված գրաֆիկից (նկար), նշված պայմաններում խտանյութում առկա ամբողջ ցինկի 40%-ը անցնում է լուծույթ:

Փորձերի երկրորդ մասում խտանյութը ուղղակիորեն տարրալուծվել է ծծմբական թթվի 10%-անոց լուծույթում, 30 ժամվա ընթացքում, 100°C ջերմաստիճանում, օդամղման և ան-

ընդհատ խառնման պայմաններում: Այնուհայտ է, որ ջերմաստիճանի բարձրացումը փոքրացնում է տարրալուծման աստիճանը, հասցնելով 29%: Դա բացատրվում է նրանով, որ բարձր ջերմաստիճաններում իջնում է թթվածնի լուծելիությունը ջրում [2], հետևապես, համեմատաբար ավելի փոքր քանակությամբ թթվածին է մասնակցում ռեակցիայի գոտում (աղյուսակ):

Բոլոր դեպքերում նկատվում են փոփոխազդեցություններ, ինչը բացատրվում է խտանյութում մնացորդային ֆլոտացման ազդանյութերի առկայությամբ ($CuSO_4 \times 5H_2O$, նատրիումի բութիլայն քանտոզենատ, ֆլոտոյուլ (T66, T92), կիր և այլն): Մնացորդային ֆլոտացման ազդանյութերի առկայությունը ազդում է նաև կորզման աստիճանի վրա, ուստի տարրալուծումից առաջ նրանց հեռացնելու համար անհրաժեշտ է խտանյութը վանալ Na_2S -ի ջրային լուծույթով, ակտիվացած ածխի ներկայությամբ:

Օդից կամ մաքուր թթվածնից ջրում լուծված թթվածնի հագեցած կոնցենտրացիաները, կախված ջերմաստիճանից [2]

Ջերմաստիճանը, °C	Թթվածնի լուծելիությունը, մգ/լ	
	21% O ₂ (օդ)	100% O ₂
0	14,58	69,45
5	12,75	60,72
10	11,27	53,68
15	10,12	48,02
20	9,11	43,39
25	8,25	39,31
30	7,53	35,88
35	6,96	33,15
37	6,75	32,22
40	6,47	30,82

Այսպիսով ցինկի միներալը՝ սֆալերիտը, հնարավոր է ծծմբական թթվի թույլ ջրային լուծույթում օդի թթվածնով օքսիդացնել մինչև նրա ջրում լուծելի

միացության, նախադրյալներ ստեղծելով սուլֆիդային խտանյութերի ուղղակի տարրալուծումով անկորուստ ձևով ցինկի կորզման համար:

Գրականություն

1. L. Սարգսյան, Թ. Ավագյան // Յինկ-սուլֆիդային խտանյութի օքսիդացման և տարրալուծման գործընթացի ուսումնասիրումը. ԳՊԵԳ-ի տարեկան գիտաժողով, հատոր 2. - 2004. - էջ 629-632:
2. The Extractive Metallurgy of Gold in South Africa. Edited By G. G. Stanley. Vol. 1, Vol. 2, Johannesburg, 1987.

ԲԱԶՄԱՍԵՏԱՂԱՅԻՆ ԳՈՒՄԲԻՑ ԿՈՐԶՎԱԾ ԿԱՊԱՐԻ ԷԼԵԿՏՐՈԼԻՏԱՑԻՆԱՑՈՒՄԸ
Ա.Աղայան


Սուլֆատային բովվածքի թթվային տարրալուծման կապարատար սորախցուկից (հիմնական բաղադրիչը $PbSO_4$) կերակրի աղով հագեցած ջրային լուծույթում քլորիդացված և երկաթի տաշեղով վերականգնված արգասիքի ռենտգենակառուցվածքային վերլուծությունը ($\Delta POH-2,0$; CuK_{α} - ճառագայթմամբ, ռենտգենոգրամի վերծանումը ըստ [1]) ցույց է տալիս, որ այն, առավելապես մետաղական

կապար է՝ 2,8377 Å ($Pb_{(111)}$); 2,4648 Å ($Pb_{(200)}$); 1,7391 Å ($Pb_{(220)}$) և 1,4848 Å ($Pb_{(311)}$) բնորոշ միջհարթությունային հեռավորություններով (նկար): Ռենտգենագրամի վրա փոքր ինտենսիվությամբ արտահայտված գծերը՝ 4,23 Å ; 3,3188 Å ; 2,9760 Å ; 2,6851 Å ; 2,0562 Å ; 1,9640 Å միջհարթությունային հեռավորություններով վերաբերում են մնացորդային $PbSO_4$ ֆազին՝ համընկած չնչին քանակությամբ տեխ-


նոլոգիապես անխուսափելի ներմուծանքի ($FeOOH$) գծերի հետ: 1,9640 Å և 1,9065 Å գծերը առավել հավանականությամբ վերաբերում են մնացորդային Fe_1-xS միացությանը: Մնացած գծերը, հավանաբար, արտահայտում են α -Fe ֆազը, որի գոյությունը վերականգնված արգասիքում պայմանավորված է ցեմենտացնող երկաթատաշեղի մեխանիկական մաշվածքով:

Այլ տեսակի խառնուրդները ռենտգենակառուցվածքային վերլուծության միջոցով չեն կարող հայտնաբերվել՝ նրանց չնչին քանակության պատճառով: Ստացված կիսամաքուր կապարի ռաֆինացման անոդները պատրաստվել են ավանդական հալման և ծուլման եղանակով: Մեկնարկային կաթոդային հիմքեր են ծառայել մաքուր էլեկտրոլիտային կապարե թերթիկները:

Էլեկտրոլիտը կապարի ֆտորոսիլիկատի և ազատ ֆտորոսիլիցիումային թթվի ջրային լուծույթն է [2], որը պատրաստվում է տեղում: Սկզբում դաշտային շպատի քայքայմամբ ծծմբական թթվով ստացվում է ֆտորաթթու՝




անջատված թթվի գոլորշին կլանվում է ջրով: Ֆտորոսիլիցիումային թթուն ստացվում է ֆտորաթթվի լուծույթում ավելացնելով մանր քվարցափոշի՝



Ստացված ջրային լուծույթը պարունակում է 33,3 % (ըստ ծավալի) H_2SiF_6 : Լուծույթի հագեցումը կապարով ($PbSiF_6$ - ի տեսքով) կատարվում է սառեցման պայմաններում:

- էլեկտրառաֆինացման օպտիմալ ռեժիմ է ընտրված՝
- էլեկտրոլիտի կազմը՝ 65-90 գ/լ կապար՝ PbSiF₆ – ի տեքով և 70-95 գ/լ ազատ H₂SiF₆;
- էլեկտրոլիտի ջերմաստիճանը՝ 35-50 °C (պահվում է ինքնուրույնբարձր ի հաշիվ էլեկտրոդների վրա էկզոթերմիկ ռեակցիաների հետևանքով անջատվող ջրուլյան ջերմության);
- հոսանքի խտությունը՝ 150-200 Ա/մ²;
- վաննայի սկզբնական լարումը՝ 0,3 – 0,4 Վ, որն, այնուհետև, անոդի բևեռացման հաշվին բարձրանում է մինչև 0,5 – 0,6 Վ:



Այ. Վերականգնված կապարային արգասիքի ռենտգենագրամը:

Խիտ և հարթ կաթոդային նստվածք ստանալու համար էլեկտրոլիտի մեջ հավելվում է սուսինձ և «գուլակ» (սուլֆիտ – ցելյուլոզային արտադրության արգասիք): Սոսնձի ծախսը կազմում է 0,2 – 0,4գ, իսկ գուլակինը՝ 0,4 – 0,8գ՝ մեկ կգ կապարի համար:

Անոդային խառնուրդների վարքը էլեկտրոլիտի ժամանակ, առավելապես, կախված է լարվածությունների շարքում նրանց գրաված դիրքից: Անոդի քայքայման ժամանակ, կապարի հետ միասին, էլեկտրոլիտ են անցնում բոլոր այն տարրերը, որոնք ավելի էլեկտրաբացասական են, քան կապարը ($E^0 = -0,126$ Վ), այդ թվում՝ ցինկը ($E^0 = -0,763$ Վ), երկաթը ($E^0 = -0,440$ Վ), միկելը ($E^0 = -0,250$ Վ) և անագը ($E^0 = -0,136$ Վ): Այս տարրերը չեն վերականգնվում կաթոդի վրա և կուտակվում են էլեկտրոլիտում: Առավել վտանգավոր խառնուրդը անագն է, որի էլեկտրոդային պոտենցիալը այնքան մոտ է կապարի պոտենցիալին, որ էլեկտրավերականգնման համար անհրաժեշտ ոչ մեծ կաթոդային գերլարումը ծածկում է էլեկտրոդային պոտենցիալների տարբերությունը (0,01 Վ), այդպիսով ապահովելով անագի և կապարի համատեղ լիցքաթափումը կաթոդի վրա: Այդ պատճառով էլեկտրառաֆինացումից առաջ անագը պետք է հեռացվի կապարից իրային ռաֆինացման միջոցով: Սակայն, դրա ան-



հրաժեշտությունը չկա, քանի որ ինչպես էլքային խտանություն, այնպես էլ միջանկյալ արգասիքներում անագ չի հայտնաբերված:

Կապարից ավելի մեծ էլեկտրադրականությամբ օժտված տարրերը, այդ թվում՝ անտիմոնը ($E^0 = +152$ Վ), արսենը ($E^0 = +0,247$ Վ), փսմուտը ($E^0 = +0,32$ Վ), պղինձը ($E^0 = +0,34$ Վ), արծաթը ($E^0 = +0,80$ Վ) և ոսկին ($E^0 = +1,5$ Վ) չեն լուծվում էլեկտրոլիտում և մնում են անոդի վրա՝ գոյացնելով շլամ: Սակայն եթե այդ տարրերը անցնեն էլեկտրոլիտ, ապա կաթոդի վրա կվերականգնվեն առաջին հերթին և կաղտոտեն կապարը: Այդ պատճառով էլեկտրառաֆինացման կարևոր խնդիրն է՝ թույլ չտալ անտիմոնի, արսենի, փսմուտի, պղնձի, արծաթի և ոսկու տարրալուծումը էլեկտրոլիտում ու ապահովել դրանց ամբողջովին անցումը շլամի մեջ:

էլեկտրադրական տարրերից առավել դժվարություններ առաջ բերողը պղինձն է: Պղինձը պահվացնում է անոդը՝ պայմանավորելով անոդային բևեռականացման ավելացման անհրաժեշտությունը, որպեսզի պատշաճ մակարդակի վրա պահվի ռաֆինացման պրոցեսի արագությունը: Արդյունքում, հնարավոր է դառնում անտիմոնի, արսենի և այլ խառնուրդների տարրալուծումը էլեկտրոլիտում: Ռիստի, որպես կանոն, էլեկտրոլիտից առաջ, կապարից բացի անոդային նյութից պետք է հեռացվի նաև պղինձը, որի անհրաժեշտությունն էլ չկա, քանի որ խտանյութի բովանդակի թթվային տարրալուծման միջոցով արդեն ձեռք է բերվել պղնձի ամբողջական կորզումը:


Կիսամաքուր կապարի ռաֆինացման համար ընտրված սիլիցիումֆտորային էլեկտրոլիտը իրենից ներկայացնում է H₂SiF₆ և PbSiF₆ միացությունների ջրային լուծույթ և օժտված է բավականի լավ էլեկտրահաղորդականությամբ:

Մաքուր էլեկտրոլիտում կաթոդի վրա կարող է տեղի ունենալ կապարի և ջրածնի իոնների վերականգնում, ըստ հետևյալ ռեակցիաների՝




Սակայն առավելապես կապարն է վերականգնվում: Դա բացատրվում է նրանով, որ կաթոդի վրա բավարար արագությամբ կապարի վերականգնման համար բավական է շատ փոքր բևեռացում ($< 0,1$ Վ), այն դեպքում երբ ջրածնի իոնների վերականգնման գերլարումը 25 °C և 100 Ա/մ² հոսանքի խտության պայմաններում 1,09 Վ է:

Անոդի վրա տեղի է ունենում կապարի տարրալուծումը՝



Ջրի օքսիդացումը անոդի վրա թվածնի անջատումով քիչ հավանական է, քանի որ այդ ռեակցիայի էլեկտրոդային պոտենցիալը զգալի չափով գերազանցում է անոդի բևեռացումը (0,2 Վ)



և էլեկտրադրական խառնուրդների (Sb, As, Bi, Cu, Ag) էլեկտրոդային պոտենցիալը:

Անոդի ոչ մեծ բևեռացման պայմաններում կապարը տարրալուծվում է բավարար արագությամբ, և էլեկտրադրական խառնուրդները մնում են անոդի մակերևութին՝ գոյացնելով սպունգաձև շլամ: Այդ շերտի մեծացումը դժվարացնում է կապարի տարրալուծումը և պայմանավորում է անոդի բևեռացման ավելացումը, պայմաններ է ստեղծում էլեկտրադրական խառնուրդների անցմանը էլեկտրոլիտի մեջ: Այդ պատճառով, որպեսզի ապահովված լինի կաթոդային նստվածքի մաքրությունը, փոքրացվում է անոդային հոսանքի խտությունը (այսինքն կապար-

րի տարրավունժան արագությունը) և նստվածքի հաստությունը: Վերջինիս համար անհրաժեշտ է եղել հնարավորին չափով փոքրացնել վաննայում անոդի գտնվելու ժամանակահատվածը:

Վաննայից հանված կաթոդները լվացվել են տաք օճառաջրով, չորացվել և ենթարկվել էմիսիոն սպեկտրալ վերլուծության: Խառնուրդների ընդհանուր պարունակությունը չի գերազանցել 0,005 %-ը: Մետաղի ելքը ըստ հոսանքի 95 % է:

Բաժինացված կապարն իր մաքրությամբ չի զիջում գրականական տվյալներին [3]:

Գրականություն

1. ASTM (США). Американская рентгеновская картотека
2. Шиврин Г.Н. Металлургия свинца и цинка. - М.: Металлургия, 1982. - 351 с.
3. Смирнов М.П. Рафинирование свинца и переработка полупродуктов. - М.: Металлургия, 1977. - 272 с.

